ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Սոնա Ծառուկյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստան (ք. Թբիլիսի), 2024 թվականի մարտի 6-8-ը

3. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   «Տնտեսական համագործակցության կազմակերպության (ՏՀԿ) երկրներում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտի (PPR) վերացման համար PPR մոնիթորինգ և գնահատման գործիքի ներդրում» ՏՀԿ տարածաշրջանային ցանցային հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության վերացման և երկիրը հիվանդությունից ազատ ճանաչելու համար դոսյեի պատրաստելու, հայտ ներկայացնելու, պահանջվող տեղեկատվության տրամադրելու, ինչպես նաև իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ քննարկումներ, այլ երկրների փորձի ներկայացում և քննարկում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Քննարկվեցին մասնակից երկրների (Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ղրղզստան, Ղազախստան, Ադրբեջան) կողմից ներկայացված ելույթները և երկրների փորձը մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության դեմ պայքարի և կանխարգելման, իրականացվող միջոցառումները և դրանց ներդաշնակեցումը հարևան երկրների հետ: Քննարկվեց երկրների մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության շճամոնիթորինգի պլանի կազմում և իրականացումը, ինչպես նաև դոսյեի պատրաստման փուլերը:

Ներկայացվեցին նաև FAO-ի և OIE-ի փորձագետների ելույթներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

FAO-ի փորձագետների հետ քննարկվեց ՀՀ-ում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության բռնկման և վերացման վերաբերյալ Վրացական կողմի հետ սիմուլացիոն-ուսուցողական վարժանք իրականացնելու հնարավորությունը: Քննարկվեց FAO-ի կողմից վերոնշյալ միջոցառմանը աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստանում մանր եղջերավոր կենդանիների ժանտախտի (PPR) վերացման համար PPR մոնիթորինգ և գնահատման գործիքի ներդնելու համար անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում ձևավորել աշխատանքային խումբ, բաշխել իրականացվելիք աշխատանքները, իրականացնել կարողությունների գնահատում և կազմել ծրագիր երկիրը մանր եղջերավորների ժանտախտից ազատ ճանաչելու դոսյեն կազմելու համար:

Կախված արդյունքներից՝ դոսյեի ներկայացումը FAO նախնական առաջարկվեց ներկայացնել 2026-2027 թվականներին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 12 մարտի 2024թ